

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Նոյեմբերի առաջին տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոյեմբերի առաջին տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում նորմայից բարձր է եղել 1-2 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են նոյեմբերի 8-ին, 9-ին. Տավուշում գրանցվել է +21…+23^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +15…+17^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +19…+21^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +25…+27^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +20…+23^{0}C, Շիրակում՝ +15…+18^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +14…+16^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +16…+18^{0}C, Գեղարքունիքում՝ +15…+18^{0}C, Լոռիում՝ +20…+24^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +20…+22^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +14…+17^{0}C, նախալեռներում՝ +15…+17^{0}C (Աշտարակ՝ +21^{0}C) :

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են նոյեմբերի 1-ին և 3-ին. Տավուշում գրանցվել է +1…+3^{0}C (Դիլիջան՝ -2^{0}C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -2…-4^{0}C, նախալեռնային շրջաններում՝ -1….+1^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +4…+6^{0}C (Կապան՝ +2^{0}C) նախալեռնային շրջաններում՝ 0…-2^{0}C (Սիսիան՝ -8^{0}C), Շիրակում՝-3…-6^{0}C (Աշոցք՝ -9^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ -4…-6^{0}C (Ֆանտան՝ 0^{0}C), նախալեռնային շրջաններում՝ -1…+1^{0}C, Գեղարքունիքում՝ -3…-8^{0}C (Սևան՝ +0.8^{0}C, Շորժա՝ +1^{0}C), Լոռիում՝ -4…-7^{0}C (Օձուն՝ 0^{0}C), Արմավիրում՝ -1…-3^{0}C, Արարատում՝ -1…+2^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ -4…-6^{0}C, նախալեռներում՝ +1…+3^{0}C:

Տասնօրյակի ընթացքում հանրապետությունում տեղումներ չեն դիտվել:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են նոյեմբերի 3-ին. լեռնային շրջաններում՝ -3...-8^{0}C (Գավառ՝ -10^{0}C), նախալեռնային և հովտային շրջաններում՝ -2....+2^{0}C:



Հողի արդյունավետ խոնավության պաշարներն անցյալ տասնօրյակի համեմատ նվազել էին 3-5%-ով: Լեռնային շրջաններում հողի 20սմ խորության վրա կազմել են 10-25%, նախալեռնային շրջաններում՝ 15-25%, հովտային շրջաններում՝ 15-30%: Հողի 40սմ խորության շերտում լեռնային շրջաններում կազմել են 15-25%, նախալեռնային շրջաններում՝ 17-30%, հովտային շրջաններում՝ 15-35%:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում աշնանացան ցորենի վեգետացիան ամենուրեք շարունակվել է:

Լեռնային և նախալեռնային շրջաններում աշնանացանը շարունակվել է գտնվել թփակալման և հանգուցային արմատների առաջացման փուլերում, հովտային շրջաններում այն ծլել է, տեղ-տեղ առաջացել է երրորդ տերևը:

Դաշտերում և այգիներում շարնունակվել է ծառերի տերևների գունաթափումը և տերևաթափը: